ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

# 2020-2022

# ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

# ԵՎ 2020

# ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Տնտեսական հետազոտությունների կենտրոնն իր աշխատանքները սկսել է 2015թ. հունվարի 1-ից: Նախորդող միջնաժամկետ հատվածում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում» ծրագրի 2016, 2017, 2018 և 2019 թվականների բյուջետային հայտերը: 2016 թվականի համար հատկացվել է 28,135 հազար դրամ բյուջե, իսկ 2017, 2018 և 2019 թվականների բյուջետային հայտերը հաստատվել են 27,360 հազար դրամ տարեկան բյուջեներով:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի նպատակն է մակրո և միկրո մակարդակներում բազմապրոֆիլ տնտեսական, ոլորտային, ճյուղային հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացման միջոցով բարձրացնել տնտեսական քաղաքականության արդյունավետությունը: Տնտեսական հետազոտությունների կենտրոնի պարտավորություններն են իրականացնել բազմակողմանի և համապարփակ հետազոտություններ և վերլուծություններ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ✓ Արտահանում և ներմուծում,
- ✓ Ներդրումներ,
- ✓ Արդյունաբերություն,
- ✓ Աշխատանքի շուկա,
- ✓ Մակրոտնտեսական կանխատեսում,
- ✓ Մակրոտնտեսական այլ հետազոտություններ,

2018 թվականի ընթացքում իրականացված հետազոտական և վերլուծական հիմնական աշխատանքներն են՝

➢ Ապրանքային արտահանման մշտադիտարկման իրականացում, արտահանման կառուցվածքի և դինամիկայի վերլուծության իրականացում, արտահանման որոկական տեղաշարժերի գնահատում, արտահանման միտումների գնահատում: Վերոգրյալ վերլուծական աշխատանքների իրականացման շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են զեկույցներ (թվով 12 զեկույց):

➢ Ապրանքային ներմուծման մշտադիտարկման իրականացում, ներմուծման կառուցվածքի և դինամիկայի վերլուծության իրականացում, ներմուծման միտումների գնահատում: Այս վերլուծական աշխատանքների իրականացման շրջանակներում ամսական պարբերականությամբ մշակվել են զեկույցներ (թվով 12 զեկույց):

➢ ՀՀ-ում աշխատուժի արտադրողականության գնահատման հետազոտական աշխատանքի իրականացում: Այս հետազոտության շրջանակներում գնահատվել է ՀՀ-ում աշխատուժի արտադրողականության աստիճանը ըստ տնտեսության ոլորտների, իրականացվել է համեմատակ վերլուծություն այլ երկրների համապատասխան ցուցանիշների նկատմամբ, մասնավորապես ԵԱՏՄ և ԵՄ երկրների նկատմամբ: Ինչպես նաև, գնահատվել է ՀՀ-ում արտադրողականության միտումները և դինամիկան:

➢ Արտահանման հարաբերական առավելության (RCA/RSCA) գնահատման իրականացում: Հետազոտության իրականացման նպատակն է բացահայտել ՀՀ-ից արտահանվող հարաբերական առավելություն ունեցող ապրանքները, ուսումնասիրել միտումները: Հետազոտական աշխատանքի շրջանակում մշակվել է վերլուծական զեկույց:

➢ Գնահատվել է արտահանվող ապարքների բարդության ինդեքսը (product complexity index):

➢ Իրականացվել է կոմպլեմենտարության ինդեքսի գնահառտմանն ուղղված վերլուծական աշխատանքներ: Վերլուծության նպատակն է գնահատել ՀՀ-ի և առևտրային գործընկեր երկրների միջև առևջրաշրջանառության համապատասխանության աստիճանը: Վերլուծության արդյունքում մշակվել է վերլուծական զեկույց:

➢ Գլոբալ մրցունակության ինդեքսի շրջանակներում սիմուլյացիոն գործիքի պատրաստում: R ծրագրային փաթեթի միջոցով մշակվել է սիմուլյացիոն գործիք, որը հնարավորություն է տալիս գնահատել Հայաստանի դիրքի փոփոխությունը՝ պայմանավորված ենթաինդեքսների արժեքների փոփոխությամբ:

➢ Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունների ռիսկերի գնահատում՝ պայմանավորված ԱՄՆ կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ: Այս վերլուծության արդյունքում մշակվել է համառով վերլուծական աշխատանք:

➢ Իրականացվել է արժեշղթայի գնահատման (value chain estimation) աշխատանքներ առաջին սպառման ապրանքների համար, մասնավորապես հացի համար:

- Գնահատվել են որոշ ներդրումային ծրարգերի իրատեսականության աստիճանը:
- R ծրագրային փաթեթի միջոցով մշակվել է մակրոտնտեսական, մասնավորապես առևտրաշրջանառության վիճակագրական տվյալների բազա:
- Այլ հետազոտական և վերլուծական աշխատանքներ:

## 3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

| Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) | Հիմնավորումներ |
|---|---|
| Միկրո և մակրո մակարդակներում տնտեսական, ոլորտային և ճյուղային հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացում գիտականորեն հիմնավորված մեթոդական հենքի հիման վրա: | ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N65-Ա որոշում, «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր»,<br><br>ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N744-Լ որոշում, «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրութունը հաստատելու որոշում»,<br><br>ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի որոշում, «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման»: |
| Տնտեսական հետազոտությունների կենտրոնի կատարված աշխատանքների մոնիտորինգի իրականացում, կատարված մոնիտորինգի հիման վրա տարեկան աշխատանքային ծրագրերի ճշգրտում և վերջինիս իրականացում: | |
| Կենտրոնի մասնագետների ունակությունների և գիտելիքների խորացում, մասնագիտական հմտությունների մակարդակի բարձրացում: | |

## 4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1058 | 11003 | «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում» | Միկրո և մակրո մակարդակներում տնտեսական, ոլորտային և ճյուղային հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացում գիտականորեն հիմնավորված մեթոդական հենքի հիման վրա: | | ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N65-Ա որոշում, «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր», ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N744-Լ որոշում, «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրութունը հաստատելու որոշում», ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի որոշում, «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման», |

### 4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր» N65-Ա որոշմամբ սահմանված ՀՀ կառավարության գործունեության հիմնական ուղղություններին և նպատակներին հասնելու, ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման» ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի

նպատակների և ռազմավարական գերակայությունների ապահովման, ինչպես նաև ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. մարտի 6-ի N197 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1229-Ն որոշմամբ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության առջև դրված խնդիրների լուծման և գործառույթների իրականացման գործընթացում առանցքային դեր ունեն մակրո և միկրո մակարդակներում բազմապրոֆիլ տնտեսական, ոլորտային և ճյուղային հետազոտությունների և վերլուծությունների իրականացումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N744-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կանոնադրության համաձայն Նախարարությունը իր նպատակների և խնդիրների կենսագործման նկատառումով իրականացնում է տնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և գնահատումներ, որոնց արդյունքների հիման վրա մշակում է տնտեսական քաղաքականություն:

2018թ.-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության» ծրագրի 2019թ.-ի բյուջետային հայտը, որը հաստատվել է 27,360 հազար դրամ բյուջեով:

### 4.3. Նոր նախաձեռնությունները

Նոր նախաձեռնություններ չկան:

## 5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չկան:

## 6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից կատարվելիք հետազոտությունները և վերլուծությունները կարող են առնչվել նաև ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական վիճակին:

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր չկան:

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

«Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում» ծրագրի իրականացման համար 2020-2022թթ. նախատեսվում է տարեկան 27,360 հազար դրամ ֆինանսավորում:

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

| N | Ռիսկի նկարագրությունը | Երևույթի հանդես գալու հավանականությունը | Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆինանսավորման ընդհատում, դադարեցում կամ նվազեցում | 3 | Սահմանված նպատակների և ակնկալվող արդյունքների չիրականացում, ինչպես նաև սկսված աշխատանքների կասեցում | Յուրաքանչյուր ծրագրային միջոցառման համար չափելի արդյունքների սահմանման, ինչպես նաև անընդհատ դիտարկման և հաշվետվությունների պատրաստման և ներկայացման միջոցով բավարար հիմքերի ստեղծում ֆինանսական միջոցների հատկացումը երաշխավորելու համար |
| 2 | Որակյալ կադրերի արագ համալրման բարդություն և պրոֆեսիոնալ կադրերի հոսունության վտանգ | 3 | Սահմանված նպատակների և ակնկալվող արդյունքների նախանշված ժամկետներում և որակով իրականացման հետ կապված խոչընդոտների առաջացում | Կադրերի հոսունության կանխման նպատակով աշխատավարձերի աստիճանական բարձրացում, մասնագիտական որակների կատարելագործման նպատակով համապատասխան սեմինարների մասնակցության ապահովում |

## ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ

| | |
|---|---|
| Ծրագիրը՝ | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ |
| Միջոցառումը՝ | «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում» |
| Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝ | «Հայեցողական ծախսերին դասվող միջոցառում (շարունակական)» |

**3. Ծախսերի ամփոփ գնահատականը՝**

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը | Միջոցառման գծով հաշվարկված ծախսերը (հազ. դրամ) | | | Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (+/-) | | | Միջոցառման գծով ծախսերը (հազ. դրամ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020թ | 2021թ | 2022թ | 2020թ | 2021թ | 2022թ | 2020թ | 2021թ | 2022թ |
| *Աշխատակիցների վարձատրություն* | 27,360 | 27,360 | 27,360 | - | - | - | 27,360 | 27,360 | 27,360 |
| Ընդամենը | 27,360 | 27,360 | 27,360 | - | - | - | 27,360 | 27,360 | 27,360 |

## Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

### ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| Դասիչ | | Ծրագիր/Միջոցառում | 2018թ. Փաստացի (հազ. դրամ) | 2019թ սպասվող (հազ. դրամ) | 2020թ (հազ. դրամ) | 2021թ (հազ. դրամ) | 2022թ (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | | | | | | | |
| 1058 | | Ծրագրի անվանումը՝<br>Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ<br>Ծրագրի նպատակը՝<br>*<Լրացնել ծրագրի նպատակը >*<br>Վերջնական արդյունքի նկարագրությունը՝<br>*< Լրացնել վերջնական արդյունքի նկարագրությունը >* | *<Լրացնել ծրագրի գծով ընդհանուր հատկացումները>* | <... > | <... > | <... > | <... > |
| Ծրագրի միջոցառումներ | | | | | | | |
| | | Ընթացիկ միջոցառումներ | | | | | |
| | 11003 | Միջոցառման անվանումը՝<br>Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում<br>Միջոցառման նկարագրությունը՝<br>«Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում» ծրագիրը միտված է տնտեսական քաղաքականության հետազոտական և վերլուծական հենքի ապահովման միջոցով բարձրացնել տնտեսական քաղաքականության արդյունավետությունը:<br>Միջոցառման տեսակը՝<br>Տնտեսական հետազոտությունների իրականացում | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 |

## ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Ծրագրի դասիչը | Ծրագրի անվանումը |
|---|---|
| 1058 | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ |

## Ծրագրի միջոցառումները

| Ծրագրի դասիչը՝ | 1058 | Ցուցանիշներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը՝ | 11003 | 2018թ. փաստ. | 2019թ սպասվող | 2020թ | 2021թ | 2022թ |
| Միջոցառման անվանումը՝ | Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում | | | | | |
| Նկարագրությունը՝ | «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում» ծրագիրը միտված է տնտեսական քաղաքականության հետազոտական և վերլուծական հենքի ապահովման միջոցով բարձրացնել տնտեսական քաղաքականության արդյունավետությունը: | | | | | |
| Միջոցառման տեսակը՝ | *Տնտեսական հետազոտությունների իրականացում* | | | | | |
| *<Միջոցառում իրականացնողի անվանումը>* | *ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն* | | | | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | | | | |
| *<Ոչ ֆինանսական չափորոշիչի տեսակը>* | *<Ոչ ֆինանսական չափորոշիչը>* | | | | | |
| Քանակական | Հետազոտությունների քանակ | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Ժամկետ | Տարի | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ) | | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 |

## Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

| Ծրագրային դասիչը | | Ծրագիր /Միջոցառում | 2018թ փաստ. (հազ. դրամ) | | 2019թ սպասվող (հազ. դրամ) | | 2020թ բյուջե (հազ. դրամ | | 2021թ բյուջե (հազ. դրամ) | | 2022թ բյուջե (հազ. դրամ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | Աշխատակիցների վարձատրություն | Ընդամենը | Աշխատակիցների վարձատրություն | Ընդամենը | Աշխատակիցների վարձատրություն | Ընդամենը | Աշխատակիցների վարձատրություն | Ընդամենը | Աշխատակիցների վարձատրություն |
| 1058 | | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | | | | | | | | | | |
| | 11003 | Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 |

## Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

| Ծրագրային դասիչը | | Ծրագիր /Միջոցառում | Գործառական դասակարգման | | | 2018թ փաստ. (հազ. դրամ) | 2019թ սպասվող (հազ. դրամ) | 2020թ բյուջե (հազ. դրամ) | 2021թ բյուջե (հազ. դրամ) | 2022 թ բյուջե (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Բաժին | Խումբ | Դաս | | | | | |
| 1058 | | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | X | X | X | | | | | |
| | 11003 | Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում | 04 | 01 | 01 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 | 27,360 |

## Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

### Աղյուսակ 1.  Ծրագրերի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2020-2022 թթ համար

(հազ. դրամ)

| Ծրագրային դասիչը | | Ծրագրի/միջոցառման անվանումը | Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը (հազ. դրամ) | | | Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (-) | | | Նոր նախաձեռնություններ (հազ. դրամ) (+) | | | Միջոցառման գծով ամփոփ ծախսերը  (հազ. դրամ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | 2020թ | 2021թ | 2022թ | 2020թ | 2021թ | 2022թ | 2020թ | 2021թ | 2022թ | 2020թ | 2021թ | 2022թ |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի) | | | | | | | | | | | | | | |
| 1058 | | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | | | | | | | | | | | | |
| | 11003 | Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության ապահովում | 27,360 | 27,360 | 27,360 | - | - | - | - | - | - | 27,360 | 27,360 | 27,360 |

**Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ**

(հազար դրամներով)

| | **2019թ.** | **2020թ.** | **2021թ.** | **2022թ.** |
|---|---|---|---|---|
| 1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները | X | 27,360 | 27,360 | 27,360 |
| 2. <<ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները | | X | X | X |
| 3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.) | X | 27,360 | 27,360 | 27,360 |
| 3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման) | X | 27,360 | 27,360 | 27,360 |
| 3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով | X | - | - | - |
| 3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը | X | - | - | - |
| 4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2) | X | - | - | - |
| 5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1) | X | - | - | - |